

ԵՐՈՒՍԱՂԷՄ, ԵՐՈՒՍԱՂԷՄ

Եթե մոռացայց զքեզ, Երուսաղէմ, մոռացի զիս աջ իմ:

Կցեսցի լեզու իմ ի քիմս իմ...

Սաղմոս ԺԼԶ, 5

Կրնամք մոռնալ Երուսաղէմը:

Հաւանաբար հայրենաբաղձ սաղմոսերգուն կը ներէ մեզի եթէ յայտնենք, թէ պէտք չենք զգար իրեն նման սարսափելի սրտիմներ յանձն առնելու որպէսզի հաւաստիացուցած ըլլանք թէ Երուսաղէմը երբեք չենք մոռնար: Երուսաղէմը չի մոռցուիր: Մեր աճրաւարար փորձառութեամբ կրնանք վկայել, թէ Երուսաղէմը չի ձգեր որ զինք մոռնանք...

Հրեական Երուսաղէմը մզկիթին մէջ մարդ կը սպաննէ աղօթքի պահուն, արաբական Երուսաղէմը երեխաներով լեցուն ինքնաշարժ կը պայթեցնէ, ասորական Երուսաղէմը Մեռեալ Ծովու մագաղաթ կը ծախէ, յունական Երուսաղէմը գարշաճոտութիւն կ'արտածէ, լատինական Երուսաղէմը կոյուղին կը ծածկէ բծախնդրութեամբ, իսկ հայկական Երուսաղէմը ձեռագիր աճուրդի կը համէ:

Դժբախտաբար լաւ, բարի, դրականը չեն յիշուիր, որովհետեւ, կը խորհիմք, մարդիկ պէ՛տք է որ լաւ ըլլան, բարի և դրական գործ տեսնեն: Այս է պատճառը որ գէշը, չարը և ցաւը ԼՈՒՐ են, յիշարժա՛ն, յատկապէս առով սնանդոցներուն համար: Ս. Թակոբեանց զինուորեալ, իրապէ՛ս զինուոր միաբաններուն ազգային-հոգևոր անմեան, անփոխարինելի և անգնահատելի գործը ԱԿԱՄԱՅ կը յիշենք միայն այն ատեն երբ սաղմոսեան ցաւի մը կոտորանքը ծովեր կտրելով մեզի կը հասնի:

Այս օրերուն հայկական Երուսաղէմը կը յիշուի հողերու շահարկումի հարցով մը, որ, Ս. Քաղաքին նման, օրակարգի վրայ է յափտեանս յափտեմից: Կը բաւէ, որ պատրիարքարանը կալուած մը վարձու տայ երկար ժամկետով (89 տարի), ծախէ կամ գայն շահարկելու համաձայնագիր կնքէ, վիճիկը կը փոթի, Երուսաղէմի «սաշտսյանները» թւերը կը սոթտեն, «գաղափար» տուողները ինթրնէթի վրայ կ'անցնին (անցեալին փողոց կ'իջնէին): ՌՄԱՆԵ «կը ցնցուին», ուրիշներ «գող» կը բռնեն, առանց գիտնալու, առանց տեսնելու:

Պարզուածը եղերագրուելու մըն է, որ երբեք չի պատշաճիր հայ ժողովուրդի այսօրուան ուսումնական-ընկերային-տնտեսական մակարդակին:

Հայկական Երուսաղէմը, բացի սրբատեղիներէն, ունի կարևոր թիով անշարժ կալուածներ գորս դարերու ընթացքին ուխտատուներ և միաբաններ մուր տուած են Ս. Թակոբայ վանքին: Անոցմէ ոմանք արդիւնատրապէս կը շահարկուին, ուրիշներ՝ անբաւարար չսփով և դեռ կան, որոնք ամսշալ են և անստուղ:

Ի՞նչ պէտք է ընէ Ս. Թակոբեանց Միաբանութիւնը, որ օրինական բացարձակ տէրն ու տնօրէնն է կալուածներուն: Պատասխանը կուտայ տնտեսագիտական սիւնգերական սկզբունքը.

ԱՆՇԱՐԺ ԿԱԼՈՒԱԾ ՄԸ (ԻՆՉՊԵՍ ԱՄԷՆ ԿԱՐԺՐ ՍՏԱՑՈՒԱԾՔ) ԴԵՏՔ Ե ԸԱՀԱՐԿՈՒԻ ԱՌԱԽԵԼԱԳՈՅՆ ԱՐԴԻՒՆԱԽԵՏՈՒԹԵԼԱՄԲ, ՈՐՈՎՀԵՏԵԻ ԹԵՐԻ ԸԱՀԱՐԿՈՒՈՂ ԿԱՄ ԲՆԱԻ ԶՇԱՀԱՐԿՈՒՈՂ ԱՆՇԱՐԺ ԿԱԼՈՒԱԾԸ ՎՆԱՍ Ե ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ, ՆՈՅՆԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ:

Ուրեմն՝ ո՛չ միայն սխալ չէ, այլ անհրաժեշտ է անշարժ կալուած շահարկել, այսինքն ըստ պարագայի և յարմարութեան:

ա. Կառուցել, նորոգել կամ վերակառուցել՝ շուկայի սակով վարձք գանձելու համար.

բ. Դրամատերներու կամ շինարարական ընկերութեանց հետ հասութաբեր կառույցներ քարձրացնել՝ տրամադրելով անմշակ հողը անվերադարձ կամ երկարաժամկետ վարձակալական պայմանագրութեամբ, փոխարէն ստանալով մասնականիկ դրամ, շահաբաժին մը եկամուտէն և կամ բաժին մը կառույցներէն.

գ. Միանգամընդմիջ ծախել և հաստիքը օգտագործել եկամտաւերներդրումներու մէջ:

Անկախաբար կալուածային զարգացման կամ շահարկման ի նպաստ վերևի հաստատումէն, լատուկ ուշադրութեան պէտք է արժանանայ հայկական Երուսաղէմի անմշակ հողերը շահարկելու ստիպողականութիւնը ԶԱՂԱԶԱԿԱՆ մկատումներով: Աւելին ըսելու պէտք չենք զգար:

Ինչո՞ւ ուրեմն իրար կ'անցնինք երբ լսենք որ հայկական Երուսաղէմը հող ծախած է կամ երկար տարիներու համար վարձու տուած: Պատճառները պատմական են և հոգեբանական:

Կայ թիւ աւանդութիւն մը, ծագումը հրեական, որ հողին չի նայիր իբրև տնտեսական ազդակի, այսինքն շահարկելի ինչպէս ոսկի, արծաթ, քայլում կամ շամիչ, այլ իբրև աստուածային սեփականութեան կամ նահապետական սրբութեան: Հայերս թէև շատո՞ւնք հրաժարած ենք այս ըմբռնումէն մեր անհատական կեանքին մէջ, բայց կը միտինք զայն գրկել երբ խնդրոյ առարկայ հողը կը պատկանի կազմակերպութեան մը, հաստատութեան մը կամ կրօնական կեդրոնի մը: Այս հակումը, ոչ զարմանալիօրէն, շեշտուած կ'ը թուի ըլլալ Իսրայէլի կմախտացած հայ գաղութին կամ մախիկն ստղծաբայներու մօտ:

Հոգեբանական պատճառը վախի գգացումն է - վա՛խ գիշատիչներէ, վա՛խ կանխիկ դրամը շոգիացնող անպարարներէ կամ ատազակներէ: Եւ ուրեմն այդ վախին դէմ պաշտպանողական դիրք մըն է հող կամ կալուած իր անշարժութեան մէջ ... անշարժ պահելու պահանջը:

Մենք ճիշդ, խոհական և անհրաժեշտ կը գտնենք, որ ո՛չ միայն հայկական Երուսաղէմի այլև ազգապատկան որևէ հող կամ անշարժ կալուած, ո՛ր որ գտնուի, շահարկուի առաւելագոյն արդիւնատուութեամբ՝ շահարկումի օրինական բոլոր միջոցներով:

Դժբախտաբար՝ մոյճքան վճռականութեամբ չենք կրնաք, անհիմն հոչակել հայկական Երուսաղէմի կամ հայկական որևէ կազմակերպութեան հետ կապ ունեցող կալուածային գործառնութեանց սուրբի - գնում, վաճառք կամ շահարկում - քնցայայտուող վախը:

Այս վա՛խն է, որ հայկական Երուսաղէմը պէտք է փութատ և յաղթահարէ, եթէ կ'ուզէ որ հայ ժողովուրդը զինք յիշէ սաղմոսերգութիւն տալիով և ո՛չ թէ իր փորձառութիւնմբ:

Հայկական Երուսաղէմը պէտք է յիշենք կարօտավատ սրտով, երգենք և փառաւորենք: